Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 768 - Ա
որոշման

«ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՄՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՑՆՈՂ ՀԱՐԹԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	«Խարբերդի մասնագիտացված մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպության համար էլեկտրական բարձրացնող հարթակի անհատույց տրամադրում՝ շահառուների անվտանգ տեղաշարժն ապահովելու և սպասարկման պայմանների բարելավման նպատակով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	ԱՄՆ-ի «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն» (ՍՕԱՐ) հիմնադրամ (150 Ն. Ռադնոր Չեսթեր Ֆ.200, Ռադնոր 19087 Փենսիլվանիա, ԱՄՆ)
4.	Ծրագիրը կատարողը	«Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (ՍՕԱՐ) - Հայաստան» բարեգործական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Թբիլիսյան խճուղի 19 ՀՎՀՀ՝ 00148272)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Արարատի մարզ, Նոր Խարբերդ գյուղ, Բաղրամյան փողոց, 38 շենք, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	4,661,488 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	«Խարբերդի մասնագիտացված մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպություն (Արարատի մարզ, Նոր Խարբերդ գյուղ, Բաղրամյան փողոց, 38 շենք ՀՎՀՀ՝ 03801255)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի նոյեմբերի 23-ից մինչև 2027 թվականի մարտ 30-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	«Խարբերդի մասնագիտացված մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպության համար էլեկտրական բարձրացնող հարթակի անհատույց տրամադրում՝ 4,661,488 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի նոյեմբերի 23-ից մինչև 2027 թվականի մարտ 30-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը և նախատեսվող գինը	Էլեկտրական բարձրացնող հարթակի պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 4,661,488 դրամ, առանց ավելացված արժեքի հարկի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Նախատեսված չեն:
12.	Համագործակցություն պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և բարեկեցության նախարարության և տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմնին կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

20.11.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ